

ԴՌՆԱԼԴ ԹՐԱՄՓ

Դոնալդ Թրամփը հաջողակ ամերիկացու մարմնացումն է, անձ, ով մշտապես գերազանցության ստանդարտներ է սահմանում և դրան գուզընթաց ընդլայնում իր շահերը անշարժ գույքի, մարզական ու մշակութաժամանցային ոլորտներում: Դոնալդ Թրամփն ավարտել է Վարթոնի ֆինանսական կառավարման դպրոցը: Հայտնի է որպես գրքերի հեղինակ, ում գրչին են պատկանում ավելի քան 15 բեսթսելեր դարձած կամ վաճառքի մեծ պահանջարկ ունեցող գրքեր, ընդ որում նրա հեղինակած առաջին գիրքը՝ «Գործարք կնքելու արվեստը», համարվում է բիզնեսի ոլորտի դասական աշխատություն և եղել է բոլոր ժամանակների ամենամեծ հաջողություն ունեցած գրքերից մեկը:

2014թ. ընտրություններում Դ. Թրամփը մեկն էր այն անձանցից, ով ամենաշատ միջոցներն էր հատկացրել Հանրապետական կուսակցության ընտրարշավի համար և հանդես եկել միջոցներ հայթայթելու տարբեր նախաձեռնություններով: Նա նաև ներգրավված էր բուն քարոզարշավում՝ ողջ երկրով մեկ:

Սոցիալական կայքերում Դ. Թրամփին հետևողների թիվը գերազանցում է 7 միլիոնը: Նա հաճախ այս հարթակն օգտագործում է հանրության ուշադրությունը պահպանողական մտեցումներին և Օբամայի վարչակազմի ձախողումներին բնեռելու համար: Երկուշաբթի օրերին առավոտյան Դ. Թրամփը հյուրընկալվում է Fox and Friends-ում, ուր ժամանակի գերակշիռ մասը հատկացնում է հարցազրույցներին, որոնք արժարժում են ազատ շուկային վերաբերող հարցեր, շեշտադրում ամուր ընտանիքի գաղափարը, անդրադարձ կատարում ապրելու մշակույթին, ամուր ու

կայացած զինված ուժեր ունենալուն և վետերանների ու նրանց ընտանիքների մասին հոգ տանելու պետության սուրբ պարտականությանը:

Դ. Թրամփը վետերանների հարցերի նվիրյալ է: 1995թ., երբ նշվում էր երկրորդ աշխարհամարտի 50 ամյակը, Նյու Յորք քաղաքում վետերանների շքերթին ներկաների թիվը հազիվ 100 հոգի լինեք: Դա խիստ վիրավորական էր բոլոր վետերանների համար: Նյու Յորքի քաղաքապետ Ռուդի Գուլիանիի և Նյու Յորք քաղաքի ՀԴԲ պետի առաջարկով Դ. Թրամփը որոշեց առաջնորդել երկրորդ շքերթը: Նա իր միջոցների հաշվին կրկնապատկեց Ազգային օրվան նվիրված այս շքերթի կազմակերպման նպատակով հանգանակված 1 միլիոն դոլարը: Եվ նոյեմբերի 11-ին՝ շաբաթ օրը 1.4 միլիոն մարդ հետևում էր Նյու Յորքում Դ. Թրամփի առաջնորդած շքերթին, որին մասնակցում էին 25.000 վետերաններ՝ մի մասն իրենց վիետնամային համազգեստներով: Մեկ ամիս անց՝ ի գնահատումն այս նախաձեռնության, Դ. Թրամփը հրավիրվեց Պենտագոն, որտեղ նրա պատվին պաշտպանության նախարարի և համատեղ գլխավոր հրամանատարական շտաբի պետերի մասնակցությամբ ճաշ տրվեց:

Նյու Յորք քաղաքում Դ. Թրամփի անունը նույնացվում է ամենահայտնի ու ամենատպավորիչ կառույցների հետ, դրանց շարքում են՝ 5-րդ Ավենյուի աշխարհահռչակ երկնաքերը, 40 Վոլ Սթրիթ հասցեում՝ ՄԱԿ-ի պլազայի Թրամփի համաշխարհային աշտարակը և Թրամփ Փարք Ավենյուն: Նրան է նաև պատկանում Ֆլորիդայի Փալմ Բիչում գտնվող Մառա-Լագո ակումբը, ինչպես նաև գովի հայտնի

դաշտեր (17-ն այս պահի դրությամբ), որոնք սփռված են Լոս Անջելեսից մինչև Նյու Յորք, Նյու Ջերսի, մայրաքաղաք Վաշինգտոն, Ֆլորիդա՝ ԱՄՆ-ում, ինչպես նաև առկա են Շոտլանդիայում, Իռլանդիայում, Դուբայում: Վերջերս նա իր հայտնի գոլֆի դաշտերից կառուցեց Թուրնբերիում (Շոտլանդիա) և Դունբերգում (Իռլանդիա), բացի այդ շատ հայտնի է նաև Վաշինգտոնում Թրամփի գոլֆի ազգային ակումբը: Դ. Թրամփին պատկանող հյուրանոցներ կան Չիկագոյում, Լաս Վեգասում, Վայկիկիում, Պանամայում և Տորոնտոյում: Բացի այդ նրան են պատկանում Թրամփ Սոհո/Նյու Յորք և Սենթրալ Փարք Վեսթի Թրամփ ինթերնեյշնլ թաուեր էնդ հոթել հայտնի հյուրանոցները, ընդ որում վերջինս արժանացել է Հյուրընկալության ոլորտի գիտությունների ամերիկյան ակադեմիայի այնքան ցանկալի «5 աստղ» և «5 ադամանդ» մրցանակներին: Չիկագոյի Թրամփ ինթերնեյշնլ թաուեր էնդ հոթել հյուրանոցը ճանաչվել է ԱՄՆ-ի և Կանադայի թիվ 1 հյուրանոցը «Թայմ էնդ Լեյժը» ամսագրի կողմից: Վերջին շրջանում նա գնել է պատմամշակութային արժեք համարվող Դորալ հյուրանոցն ու ակումբը Մայամիում (800 ակր) և Փոստային ծառայության հին շենքը մայրաքաղաք Վաշինգտոնում, որը վերածվելու է առաջնակարգ շքեղ հյուրանոցի: Թրամփների ընտանիքը սա համարում է սերունդների ժառանգություն, ուստի վերա-

կառուցման նախագծով շենքին նոր շունչ ու կյանք է հաղորդվում: Աշխատանքները մեկնարկել են 2014թ. հուլիսին:

Դ. Թրամփը Էմմիի մրցանակի առաջադրված աստղ է և հեռուստատեսային թիվ 1 շուտ համարվող «Թեկնածուն» ռեալիթի շոուի համապրոդյուսերը: «Թեկնածուն» ռեկորդային վարկանիշ ունի ու գրավել է ողջ աշխարհի ուշադրությունը: Մեծ հաջողություն ունեցավ նաև «Աստղային թեկնածու» նախագիծը, որը նույնպես ամենաբարձր վարկանիշ ունեցող հեռուստահաղորդումներից է: «Թեկնածուի» 14-րդ ռեկորդային սեզոնը մեկնարկեց 2015թ. հունվարին: Շոուի «Դուք հեռացված եք» արտահայտությունը դարձել է թևավոր խոսք. այն երեքից տարածում գտած բոլոր ժամանակների երրորդ ամենահայտնի արտահայտությունն է: 2007թ. Հոլիվուդի փառքի ճեմուղում Դ. Թրամփի անունով աստղ տեղադրվեց: Դ. Թրամփը աշխարհի ամենաբարձր վարձատրվող հրապարակախոսներից է: «Թեկնածուի» միջոցով բարեգործական նպատակների է ուղղվել շուրջ 15 միլիոն ԱՄՆ դոլար:

Դ. Թրամփը ծնվել է Նյու Յորքի Քուինս թաղամասում: Ամուսնացած է Մելանի Թրամփի հետ, ունի 5 զավակ՝ Դոնալդ Թրամփ Կրտսերը, Իվանկան, Էրիկը, Թիֆանին և Բարոնը: Ունի նաև 7 թոռ: